
**ԲԱՌԱՔՆԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՃՇՊՐՏՈՒՄՆԵՐ
ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ՄԵԿ ԽՈՒՄԲ ԿԱԶՄՈՂ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԵԶ**

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վ. Գ.

Հայերենում կան բառեր, որոնք նախապատմական (հնագույն և վաղնջական) ժամանակաշրջանում, իբրև միևնույն արմատի տարբերակներ, ժամանակի ընթացքում իրարից բավականին հեռացել են և ներկայացնում են հնչյունական (արտահայտության պլանի), ինչպես նաև իմաստային (թեմատիկ՝ բովանդակության պլանի) փոփոխություններ, և գրավոր շրջանում դրանք միմյանցից հեռացած, գրեթե առանձին միավորներ են:

Նման միավորների բառաքնական և ստուգաբանական վերլուծությունը կարևոր է հայերենի բառապաշարի ընդհանուր պատմության տեսակետից, մանավաղ որ այս դեպքում հաշվի ենք առնում լեզվաբանական տվյալ բնագավառի նորագույն ուսումնասիրությունների ձեռքբերումները:

Այսպես, ունենք բառերի մեկ ամբողջական խումբ, որի մեջ ամփոփվող բառերը կամ բառարմատները, ամենայն հավանականությամբ, ունեն հնդեվրոպական ծագում: Դրանք մեկուկես տասնյակից ավելին են, որոնց էլ անդրադառնում ենք ստորև՝ առանձին-առանձին:

1. Հայ. աւատ (այլև հաւատ) «հավատի՝ կրոնի նվիրվածություն, վստահություն, ստուգություն» բառը «Նոր հայկազյան բառարանը» տալիս է աւատ և հաւատ/հաւատք տարբերակմամբ, ընդ որում առաջինը «հավատարմություն» իմաստով գործածված է Սուրբ Գրքում, իսկ երկրորդը՝ ոչ միայն «հավանություն, հաստատ դավանում» և «հա, այո՝, հավետ», այլև ածանցյալ այլ իմաստներով բերվում է բավականին լայն գործածության հիման վրա¹: Այստեղ ուշագրավ է հաւատ/հաւատք բառի երկրորդը՝ «հա, այո՝, հավետ» բացատրությունը, որն, անշուշտ, կապվում է աւատ/հաւատ(ք) բառի ընդհանուր (հ)աւ- արմատի հետ:

Աճառյանը, անկախ նրանից, որ Տերվիշյանը, Մեյեն և Կարստը այն կապում են հաւան «համոզում, հաճություն» բառի հետ, այն դիտում է իբրև «անստույգ բառ»²:

Ջահուկյանն ունի այս արմատը միայն հաւատ ձևով: Ընդ որում, նախ՝ վերջինիս - ատ բաղադրիչի վերաբերյալ նշվում է հետևյալը. «Առայժմ դժվար լուծելի է հին հայերեն աղբատ, անքատ...հաւատ (?) բառերի -ատ-ի

¹ Աւետիքեան, Գ. Միսմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկագեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 391, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 76:

² Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 355, հ. 3, Ե., 1977, էջ 70:

հարցը. այն համեմատում են հինդկ. *dṛāad* «ջրադաշտաբար» և հուն. *φρυγᾶς*, *φρυγᾶδος* «վազող, փախչող» բառերի հետ, որ իմաստապես քիչ հարմար է», այն արմատի հ- բաղադրիչը դիտվում է «բառասկզբի ձայնավորից առաջ հավելուրդային (թերևս հին կոկորդայինից)՝ հաւատ և աւատ (հ.-ե. *au «ընկալնել, ըմբռնել»)»: Այնուհետև, գտնում է, որ «կասկածելի է հաւատ, աղանդ, երկին- (որպես պաշտելի առարկա), այս «չար ոգի» բառերի հնդեվրոպական ծագումը»³:

Իսկ հետագայում, ոչ անկախ Հ. Բեյլիից, գրում է, որ՝ «հաւատ (աւատ), - ոյ «հավատ, կրոն, հավատարմություն, վստահություն, ստուգություն» բառը «փոխառություն (է) իրանական աղբյուրից. հմմտ. խոտա-սակ. *hot* «կարողանալ, ի վիճակի լինել» (< *fra-vat-), սողդ. *awat* «հավատ», և ավելացնում հետևյալը. «Ջահուկյանը նախապես ենթադրել է բնիկ հնդեվրոպական ծագում՝ *hau- [*au-] «զգալ, հասկանալ» արմատից, բայց հետո (ՊԲՀ 1995) հանգում է իրանական ծագման վարկածին»⁴:

Արմատի ստուգաբանության հարցում, ինչպես կարելի է նկատել, կա որոշակի երկակիություն, որն, անշուշտ, բացատրվում է նրա ծագմանը և այլ լեզուների հետ հնարավոր զուգահեռների անցկացմանը վերաբերող առավել ամբողջական քննության բացակայության հանգամանքով: Կարծում ենք, որ ավելի հավանական է աւատ (հաւատ) բառի բնիկ լինելը, այսինքն՝ ծագում է հե. *Hau (i) - արմատից, որը լծորդն է *Hue(i)- «թռչուն» արմատի, իսկ -ատ բաղադրիչի հարցը տվյալ դեպքում այլ է, ուստի այն առանձին ուշադրության առարկա կարող է լինել⁵:

2. Հայ. աւետ (նաև աւէտ) «(ուրախ) լուր» բառը «Նոր հայկազյան բառարանը» դնում է աւետիք բառի տակ՝ համարելով զուգահեռ պրսկ. *nuvid-* «նոր լուր», արաբ. *havadis* «ավետիս», լատ. *ave, avete* «ողջ կամ ուրախ լեր՝ լերուք» բառերին⁶: Ըստ Տերվիշյանի, այն կարելի է բխեցնել կա՛մ *vid- «գիտենալ», կա՛մ *avid- «զոչել» արմատից⁷: Աճառյանը սոսկ նշում է այս հանգամանքը, և ի վերջո այն համարվում է «անստույգ բառ»⁸:

Ջահուկյանը հայ. աւետ//աւէտ «ուրախ՝ բարի լուր» բառը [այլև աւետել, աւետարանեմ, աւետիք, առհաւատչեայ, աւետչեայ, աւետումն (*հրաւետումն) և այլն] ծագած է համարում հե. *aʷed-//*aʷeid- [*aʷ-, *aʷed-] «խոսել» արմատից, որը զուգահեռներ ունի ցեղակից մի շարք

³ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 113, 237, 254, 274:

⁴ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 454:

⁵ Հմմտ. Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс. Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, 1-2, Тбилиси, 1984, с. 233, 239, 867.

⁶ Աւետիքեան Գ., Միրսէլեան Խ., Աւգերեան Մ., նշվ. աշխ., էջ 394, 396:

⁷ Տերվիշեան Հ. Ս., Հնդեվրոպական նախալեզու, Կ. Պոլիս, 1885, էջ 66, 108, 130:

⁸ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 358-359:

լեզուներում. հմմտ. հինդկ. vādati, հուն. αὐδῶ «խոսք, ձայն, լուր», «գուշակություն, փառաբանություն», թոխ. Բ watk «հրամայել», միաժամանակ նշում, որ «աւետ (աւէտ) բառի ստուգաբանությունը պատկանում է Է. Աղայանին», այլն ավելացնում է հետևյալը. «Առայժմ մենք ավելի հավանական ենք համարել ատեան, աւէտ ... բառերի բնիկ հնդեվրոպական, քան իրանական ծագումը: Նրանց համար առաջարկված իրանական գուգահեռները բավականաչափ համոզիչ չեն»⁹:

Աղայանը գտնում է, որ աւետ(իք) «բարի՝ ուրախալի լուր, բարև, ողջուն» բառը ծագում է հե. *aud «խոսել» արմատի *āuēd, *auēid ածած (իմա՝ ածանցական – Հ. Վ.) ձևերից, «որոնցից օրինաչափորեն ստացվում են աւետ (< āuēd) և աւէտ (< auēid)... հմմտ. հուն. ὕδω «փառաբանել», հին հինդկ. «խոսում է, ողջունում է», vandate «գովք, պատկառալից ողջուն», հուն. αἰδῶ (< αἰείδω) «երգել», թոխ. AB wātke, B watk «հրամայել» և այլն»¹⁰:

Սույն ստուգաբանությունը ընդունելի է, սակայն հետևյալ լրացումով. նախ՝ բառի -ետ//-էտ ածանցի հետ կապված՝ նախալեզվում *-ed/*-eid ածանցի առանձնացումն այլ խնդիր է, այնուհետև՝ «կոկորդային» *H-նախահավելվածով արմատի (*Hau-) վերականգնումը հավանական է դարձնում այդ արմատի հետ առնչել նաև հայ. հաւէտ (այլն հաւիտեան, հաւիտենական և այլն) տարբերակին, որ իմաստային առումով լիովին հնարավոր է:

3. Հայ. գո՛գ (նաև գոչ-եմ) բառը, իբրև հրամայականի ձև (հմմտ. գոգջի՛ր, գոգցե՛ւ, գոգցո՛ւք), «Նոր հայկազյան բառարանը» դիտում է «պակասաւոր բայ՝ սաստկականն ոգելոյ, այն է՝ ասել. որպէս նոյն ընդ գոչել»¹¹:

Աճառյանը գոգ «ասել» ձևը բխեցնում է հե. *vog^{wh}- արմատից, և հենվելով Պոկոռնու և ուրիշների տվյալների վրա՝ համեմատում է լատ. voveō «հանդիսավոր կերպով խոստանալ, ուխտել, փափագել», votus «խոստում, ուխտ», հինդկ. vāghát- «ուխտավոր, աղոթք անող, զոհ խոստացող», ավեստ. aog (<հե. *eveg^{wh}-) «ծանուցել, ասել, խոսել» և այլն, հուն. εὐχομαι (< հե. *eveg^{wh}-) «աղոթել, ուխտել, խոստանալ, հայտարարել, ասել», εὐχῆ «ուխտ, աղոթք, մաղթանք», εὐχολή «ուխտ, աղոթք. հպարտ խոսքեր, հաղթական երգ» և այլն ձևերի հետ¹²:

⁹ Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 145, 159, 552, նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 101:

¹⁰ Աղայան Է., Բարաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 35:

¹¹ Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ., նշվ աշխ., հ. 1, էջ 565-566:

¹² Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 1, էջ 570:

Գրեթե նույնը տեսնում ենք Ջահուկյանի նախկին աշխատության մեջ, որում գոգ-ը ծագած է համարվում հե. * uog^{h} - (* eueg^{h} - «հանդիսավոր կերպով խոսել») արմատից, այլև ոգեմ-ը՝ նույն արմատի * oug^{h} - (* ueg^{h} -) տարբերակից¹³: Իսկ հետագայում Ջահուկյանն անդրադառնում է միայն գոգ «ասել, գոչել» (որից՝ գոգեմ) ձևին (ոչ ոգեմ-ին)¹⁴:

Գոգ բայաձևը, ամենայն հավանականությամբ, կապ ունի գովեմ բայի գով- հիմքի հետ: Աղայանը, ի դեպ, այս արմատի (և մեկ այլ բառի) հետ կապված, նշում է հետևյալը. «ինչպես paragauda բառը, այնպես էլ gauda բաղադրիչը իրանական փոխառություն է հայերենից. այդ փոխառյալ բառից իրանականում կազմվել է varagauda բառը, որից է հայկական վարագոյր-ը: Այստեղ էլ ունենք այնպիսի երևույթ, ինչպես որ, առնելով իրանական գով «գովասանք» բառը, հայերենը կազմել է գովասան և տվել իրանականին, որ պահլավերենում դառնալով gōsan, կրկին վերադարձել է մեզ՝ գուսան ձևով»¹⁵:

Գավկրելիձեն և Իվանովը հայ. գոգ «ասա՛» բայաձևը բխեցնում են հե. * $\text{Hueg}^{[\text{h}]o}$ - ձևից. հմմտ. հինդկ. vāghát «աղոթք արած», լատ. uoueo «խոսք եմ տալիս, խոստանում եմ», սօտում «ուխտ, խոստում», ումբր. bufetes «պահանջ, ցանկություն»: Նկատենք, որ այս արմատը ոչ այլ ինչ է, եթե ոչ երկրորդ՝ լծորդ տեսակը (տիպը) * $\text{Hueg}^{[\text{h}]o}$ - արմատի՝ իբրև լիահունչ հիմքի զրո (ø) աստիճան. հմմտ. հուն. εὔχομαι «փառաբանել», «աղաչել, աղոթել», հինդկ. óhate «փառաբանում է», ավեստ. aojaite «ասաց», aogəda «հայտնեց, հայտարարեց»: Նկատենք նաև, որ սրանց հետ սպասելի էր հայ. գովեմ «գովում եմ, գովաբանում եմ» բայաձևը՝ իբրև ձևախմբաստային համարժեք: Այսուհանդերձ, կարծում ենք, որ այս դեպքում նույնպես ունենք հնդեվրոպական ընդհանուր արմատի * $\text{Hueg}^{[\text{h}]o}$ - // * $\text{Hueg}^{[\text{h}]o}$ - տարբերակայնություն, ընդ որում ընդհանուր $\text{g}^{[\text{h}]o}$ - ածանցով¹⁶:

¹³ Джаукян Г. Б. Очерки по истории дописменного периода армянского языка, Е., 1967, с. 91, 227.

¹⁴ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 84, 124 և այլն, նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 165:

¹⁵ Աղայան Է., նշվ. աշխ., էջ 15 134-135: Ի դեպ՝ հայ. գով- արմատի իրանական փոխառություն լինելը այնքան հավանական չէ, որքան այն բնիկ դիտելը, իսկ վարագոյր բառի վերաբերյալ հնարավոր է ավելի հավաստի բացատրություն, որ հետագա խնդիր է:

¹⁶ Гамкрелидзе Т. В., Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 236:

4. Հայ. գոհ (որից՝ գոհանալ) բառը «Նոր հայկազյան բառարանում» բերված է «գոհացած, հաճ և հաւան՝ շնորհակալութեամբ հանդերձ» իմաստով, որին զուգակից է նաև հաւ(-ան) արմատը¹⁷:

Աճառյանը դիտում է իբրև «անստույգ բառ»:

Ջահուկյանը բառի ծագմանն անդրադառնում է համեմատաբար ավելի ուշ՝ նշելով հետևյալը. «թերևս փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հաստատված. իրանական ծագման վկայություն պետք է համարել դժգոհ ձևը, որ հավանաբար բուն իրանական կազմություն է (*duž-góh?): – Ջահ. ՀԼՊ, 358»¹⁸:

Նկատենք, որ այս դեպքում կա առարկության տեղիք տվող երկու հանգամանք: Նախ՝ ծագման մասին խոսվում է թեականով, իսկ իրանական «չհաստատված աղբյուրից» գալը, այլև համապատասխան կազմության մատնանշումը տրվում են հարցականով: Այնուհետև՝ «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ այս առումով նշվում է, որ իրան. դժ-մասնիկով բազմաթիվ կազմությունները հիմք են տալիս այն անկախ մասնիկ դիտելու, այսինքն՝ դրանից կարող էին նաև հայերեն կամ բնիկ՝ ոչ փոխառյալ բառերի հիմքով կազմություններ լինել՝ հետագայում. «Իրանական բառերի զանգվածային փոխառությունը հիմք է տալիս իրանական ծագման ժխտական նախամասնիկների անկախ գիտակցման համար: Դրանցից դժ-ը դժգոհ – գոհ, դժկամ – կամ տիպի զույգերում ակնհայտորեն գիտակցվել է իբրև այդպիսին»¹⁹:

Մենք հակված ենք այն մտքին, որ հայ. գոհ «գոհացած, բավականացած» և գոգ «ասա՛, համարյա թե, կարծես թե» (եթե ոչ նաև՝ գէն «խնդրեմ». հմմտ. գեթ//գէթ, գէն «իրոք, իսկապես») բառերի միջև գոյություն ունի իմաստային ընդհանրություն՝ «հոգեմտավոր վերաբերմունք՝ վերաբերություն», ուստի գտնում ենք, որ դրանք, հավանաբար, ծագում են հե. *Hueg^[h] – ձևից:

5. Հայ. հազագ «շունչ», «ձայն արտաբերող շունչը» (կրկնավոր կազմություն *հազ արմատից [հմմտ. հեզ, որից հեզել «արտաբերել», հազաչել «հաչել (շան)»):

Ըստ «Նոր հայկազյան բառարանի»՝ *հազ արմատին կից են հաչ, հառաչ, ողել, զոգ, ոզի, հոզի բառերը: Իսկ Տերվիշյանը նախալեզվի համար վերականգնում է *vak արմատը, որից՝ «գոչել, խօսիլ, սնս., զնդ. vač, լատ. vocāre, vox (*voc-s), հուն. εἶπον, ὄψ, նպրակ. bānk, նաև հայ. վանկ//վանգ, դարձեալ գոչել, նոյնպէս զոզցես, զոզջիր. հոս կրնայ բերուիլ նմանապէս հեզել, հազագ (հազ-հազ), եթէ սեմական ծնունդ չեն. տե՛ս արաբ. haǰā»,

¹⁷ Աւետիքեան Գ., Միրսէլեան Խ., Աւգերեան Մ., նշվ. աշխ., էջ 566:

¹⁸ ՋահուկյանԳ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 166:

¹⁹ Ջահուկյան, Գ. Հայոց լեզվի պատմություն, էջ 358:

վերջապէս ոգել, ոգեղ (ոգեղաբարբառ բարդին մէջ), եթէ ասոնք ոգի, հոգի բառերուն հետ լծորդութիւն չունին»²⁰:

Աճառյանը գրում է, որ հազագ-ը «կրկնուած է պարզական *հազ արմատից, որ առանձին չէ՝ գործածուած»²¹:

Իսկ Ջահուկյանը բառին անդրադառնում է տարբեր առիթներով: Նախ՝ գտնում է, որ հայ. հազագ (կրկն. *հազ-հազ) «շնչառություն» բառը ծագում է հե. *aḡ- «փչել, քամհարել, շնչել» արմատից. հմմտ. հուն. ἄος «շնչառություն», մկիմր. awyḡ «քամու ուժեղ պոռթկում», հկոռն. awit «օդ» և այլն: Եվ այս առումով տողատակին ունի հետևյալ կարևոր դիտարկումը. «հմմտ. նաև հով «քամի, զով», հոգի «շունչ» և, հնարավոր է, շոգի «գոլորշի» (հունչ «ձայն» և շունչ «շնչելը» դեպքում) և խեթ. huḡanza, թեև հով, հոգի սովորաբար բխեցնում են *pou-, *pouio» ձևերից: Ըստ վերջին ստուգաբանության *kēḡ-ին և *skh-ին (> *šx > š) հանգող շ-ի առկայությունը մնում է չպարզված: Այս հանգամանքը հուշում է *sə₃ > š, *ə₃ > h (*sx > š, *x > h?) նախաձևի մասին»²²: Այնուհետև, հունչ-ը (հարցականով) ծագած է համարվում հե. *son- (*sun?) [*s(u)en-] արմատից, իսկ ավելի ուշ՝ գալով Աճառյանի տեսակետին, այն դիտվում է «բնաձայն կազմություն»²³:

Հետագայում հազագ «շունչ, շնչափող» բառը հարցականով բխեցվում է հե. *pəḡ- [*p(e)u-, *phu-] արմատից²⁴, որը տարբեր կարգի զուգահեռներ ունի ցեղակից մի շարք լեզուներում, ընդ որում նաև կելտականում: Իսկ ավելի ուշ՝ Ջահուկյանը հազագ «շունչ, առոգանություն, շնչափող» բառը դիտում է՝ «բնիկ հնդեվրոպական՝ *pouio- [*pəu-] «փչել» արմատից, որից նաև հեւ, հոգի (տե՛ս)»²⁵:

Կարելի է կարծել, որ հայ. հազ- (<*հազ-հազ, այլև հեզ «վանկ», «հնչյուն») պարզ արմատը ևս ծագում է հե. *Heug^{[h]o}- լրիվ աստիճանի ձայնավորմամբ արմատից. հմմտ. հինդկ. óhate «փառք է տալիս», ավեստ. aoḡaite «ասաց», aogəda «հայտնեց, հայտարարեց», հուն. εὔχομαι «փառք», εὐχομαι «փառք եմ տալիս», «աղոթում եմ» և այլն, որի զրո աստիճանի *Hueg^{[h]o}- ձևից, ի դեպ, ծագած է համարվում ոչ միայն հայ.

²⁰ Աւետիքեան, Գ. Խ. Միւրմէլեան, Մ. Ազեքեան, նշվ. աշխ., էջ 1: Հմմտ. Տէրվիշեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 105:

²¹ Աճառյան Հ., , նշվ. աշխ., հ. 3, էջ 3:

²² Джаукян Г. Б., նշվ. աշխ., էջ 240:

²³ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 152, 218, նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 468:

²⁴ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 145:

²⁵ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 437:

qn q «ասա, խոսի՛ր» բայաձևը, այլև՝ հինդկ. vāghāt «խնդրված, աղաչած», լատ. uoueo «աղաչում եմ», uōta «աղոթք» և այլն²⁶:

6. Հայ. հաւ «թռչուն» բառը «Նոր հայկազյան բառարանը», վերջինիս հետևությանը նաև Պետերմանը համեմատում են լատ. avis բառի հետ, իսկ Լազարդը, նախ՝ բխեցնում է *pā- արմատից՝ ի համեմատություն հայկ. pieti, piewati «երգել, pictlū «աքլոր» ձների, ավելի ուշ՝ դիտում է լատ. pavus «սիրամարգ» բառին ցեղակից²⁷: Տերվիշյանը «վերինների հետ դնում է հնիւ. vi, avi «թռչուն» բառից»²⁸:

Հյուբշմանն ընդունում է համեմատությունը լատ. pavus, pavo ձների հետ, սակայն վերապահությանը, այն է՝ եթե սրանք նախապես ունեցած լինեն «թռչուն» իմաստը: Աճառյանը, ոչ անկախ Հյուբշմանից, գտնում է, որ այն ծագում է հե. *auei- «թռչուն» արմատից. հմմտ. լատ. avis, avicula «թռչնիկ», հինդկ. vi-, vé, vayas- «թռչուն», ավեստ. «թռչուն», հուն. οἰωνός (<* αἰωνός?) «զիշատիչ թռչուն», αἰετός (<* αἰ-ετός) «արծիվ», իռլ. ai, aoí «կարապ», կիմր. hwyad (<*auietos?) «բադ» և այլն²⁹: Աճառյանը բերում է նաև այն, որ ըստ Պետերսոնի (էջ 249-250)՝ հայ. հաւ-ը ծագում է հնիւ. *pōu, pou, pau «փոքր», «ձագուկ» արմատից. հմմտ. հուն. πῶλος «ձագ, քուրակ», παῖς «տղա, երեխա», հինդկ. Potas «ձագ», լատ. puer «տղա, երեխա», լիտվ. putytis «թռչնի ձագ», լատվ. putns «թռչուն, հալավ. pūta, pūtica «թռչուն», ընդ որում Պոկոռնին «այս մեկնությունը յիշում է նախորդի հետ (հնիւ. *auei-)»³⁰:

Ջահուկյանը գտնում է, որ հայ. հաւ («էգ թռչուն» բառը ծագում է հե. *Hau- (*auei-) թռչուն» արմատից, միաժամանակ նշում, որ «Պոկոռնին հնարավոր է համարում դուրս բերել հե. *pəu- (*pōu-) «ձագ» արմատից՝ հ-ի նկատառումով, և որն ունի զուգահեռներ ցեղակից լեզուներում. հմմտ. լատ. Avis «թռչուն»³¹: Հետագայում, ոչ անկախ Հ. Հյուբշմանից և Հ. Աճառյանից, բառը ստուգաբանվում է հետևյալ կերպ. «Բնիկ հնդեվրոպական՝ *hauei «թռչուն» արմատից. հմմտ.

²⁶ Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 236:

²⁷ Աւետիքեան Գ., Միրսիկեան Խ., Աղգերեան Մ., նշվ. աշխ., էջ 1: Հմմտ. Petermann H. Grammatica linguae armeniacae, Berolini, 1837, p. 26, Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 65-66:

²⁸ Տերվիշեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 108:

²⁹ Hübschmann H. Armenische Grammatik, 2, Leipzig, 1897, S. 465.

³⁰ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 66:

³¹ Джаукян Г. Б., նշվ. աշխ., էջ 226, ծանոթ. 25, 242, Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 114, 208, նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 453:

հինդկ. vi, ավեստ. vay, լատ. avis «թռչուն», հուն. οἰωνός «արծիվ»³²:

Ըստ Գամկրելիձեի և Իվանովի՝ հնդեվրոպական «եռաբաղաձայն» (Schwebeablaut-ով՝ «շարժուն ձայնդարձով») արմատի առաջին տիպից՝ *Hau- արմատից ունենք հայ. հալ «թռչուն». հմմտ. լատ. avis «թռչուն», հուն. αἰετός «արծիվ», բրետ. houd «բադ», իսկ երկրորդից՝ *Hue- «փչել» արմատից՝ հինդկ. vèh, (հոգն. թ.) váyah «թռչուն», vāyasá- «թռչուն», «ագռավ»³³:

Այնուհետև, հայ. հալ «թռչուն», «հալ» արմատը հեղինակները բխեցնում են նաև հե. *Hue- (նախնական իմաստով) «փչել» (որից՝ «օդ», «քամի», այլև «Վերին ոլորտի՝ աշխարհի» անվանումը) արմատից. հմմտ. հինդկ. vi-/vé- «թռչուն» (Դիգվեդայում նաև «ձի», «աստվածներ», «նետ»), ավեստ. vīš «թռչուն», պահլ. way, wāyendag «թռչուն», հուն. αἰετός «արծիվ», լատ. avis «թռչուն», ումբր. (հոգն. հայց. հոլ.) avif «թռչուններին», վալլ. Hwyaд «բադ»³⁴: Ընդ որում գտնում են, որ հե. *Hau-/*Hue- տարբերակներում, նայած արմատի ձայնդարձի այս կամ այն աստիճանի, զանազանվում են տարբեր՝ *Hau(1)-/*Hu(e1)-, այլև *Hue(1)- հիմքեր³⁵:

Ըստ այսմ, որոշակի առնչություն կա «փչել», «քամի», «թռչուն» (այլև՝ «արծիվ», «նետ», «օդ, ոլորտ՝ մթնոլորտ») իմաստների մեջ, որ հայերենում կարելի է հանգեցնել ոչ միայն հալ(ք), այլև հով, գով, հովեմ, հեւալ և այլն արմատներին:

7. Հայ. հալան «հավանություն՝ համոզում, հաճություն» բառը «Նոր հայկազյան բառարանը» դիտում է իբրև արմատ՝ այո՝ հա «այո. համաձայն լինելը» բառային տարբերակների՝ արմատի ձայնավորման դիրքի առումով (հմմտ. սա, այս, սոյն և այլն)³⁶:

Նախորդ ուսումնասիրողներից Տերվիշյանն այն բխեցնում է հնիս. *av- «յազիլ, հաճիլ, հաւանիլ» արմատից, որից սանս. av, հուն. ἄω «կշտանալ»՝ գտնելով, որ «մեր մեջ պահուած է ազ- և աւ- ձևերով. առաջինէն յազել, յազենալ, և երկրորդէն՝ հաւանել, հաւատք, հաւաստիք՝ յ և հ նախդրով»³⁷: Աճառյանը նշում է, որ հաւատ և հաւան կապի նկատառումով տեսակետ են

³² Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 453: Նկատենք, որ հունարենում οἰωνός բառն ունի ոչ միայն «գիշատիչ (թռչուն)», այլև «գուշակող, լուր բերող (թռչուն)», «նախանշան, նախանշանակ» իմաստները, որը հետաքրքիր է հնդեվրոպական արմատի բուն՝ սկզբնական իմաստի վերականգնման առումով (տե՛ս Дворецкий И. Х. Древнегреческо-русский словарь, т. 2, М., 1958, с. 1162):

³³ Նույն տեղում, էջ 233:

³⁴ Նույն տեղում, էջ 537:

³⁵ Նույն տեղում, էջ 233, 489 և այլն:

³⁶ Աւետիքեան, Գ. Միրմէլեան Խ., Աւգերեան Մ., նշվ. աշխ., էջ 72:

³⁷ Տերվիշեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 65-66:

հայտնել նաև Պեդերսենը, Գարստը, Մեյեն: Այսուհանդերձ, նա ոչ անկախ Հյուբշմանից, հաւան-ը համարում է «անստույգ բառ»³⁸:

Առավել ուշագրավ է Մեյեի կարծիքը, ըստ որի հայ. հաւան և հաւատ բառերը կապ ունեն ոչ միայն միմյանց, այլև հաւ «թռչուն» բառի հետ, ինչպես որ հուն. ὄϊσμαι «հաւատալ, կարծել» և οἰωνός «թռչուն» բառերը: Ընդ որում նկատի է առնվել հաւ բառի նման իմաստի կրող լինելը, այսինքն՝ «հնդեվրոպական է համարում՝ կապելով հավահմայության արուեստին», որ գոյություն ուներ հին աշխարհում: Իսկ որ այդ չի ընդունում Հյուբշմանը, կարելի է ասել, բոլորովին այլ տեսակետ ունենալու հարց է, եթե ոչ գիտական նոր փաստերի նկատառումով անընդունելի³⁹:

Ջահուկյանը հաւան «հավանություն, հավանող» բառի ծագման վերաբերյալ նշում է հետևյալը. «Թերևս փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հաստատված»⁴⁰:

Այս ամենով հանդերձ, կարելի է կարծել, որ հայ. հաւան (նաև հաւատ, հաւատալ և այլն) բառերի հաւ- արմատը ծագում է հե. *Haw(1)- ձևից, որն ավելի հավաստի է դառնում իմաստային-գործառական կողմով, այսինքն՝ եթե նկատի ենք ունենում ոչ միայն «հավահմայության արվեստը», որ նշում է Մեյեն, այլև «առավոտվա՝ լույսի ավետումը, հավի (աքաղաղի) կանչը»՝ իբրև «հավախոսության» գործառույթի դրսևորում:

8. Հայ. հեգ «վանկ», «(գրի) հնչյուն» բառը, ըստ Աճառյանի, փոխառություն է՝ ասոր. hayā «կարդալ», նոր ասոր. häget‘ä «հեգել», արաբ. haġa «վանկ, հեգել» (քրդ. hiĵe «վանկ»): Այսպես է գտնում նախ Հյուբշմանը, որին և հետևում է Աճառյանը: Վերջիններս այս արմատին են առնչում հեգենայ «գիր, այբուբենը» բառը՝ դարձյալ իբրև փոխառություն՝ ասոր. heyyānā «կարդալ, հեգել», «ընթերցելը, արտասանելը», որ զուգահեռներ ունի այս խմբի մյուս՝ բավականին թվով լեզուներում⁴¹:

Իսկ նախորդներից «Նոր հայկազյան բառարանը» հեգ-ը լծորդում է հայ. ոգել, ոգի, հազագ, վանկ բառերին, այլև հուն. ἦξι «աղմուկ», «ձայն. հնչյուն, խոսք», ἦχος «արձագանք», «լուր, համբավ», արաբ. heĵē, պրսկ. sügün ձևերին: Տերվիշյանը այն կապում է հայ. հազագ բառի հետ⁴²: Փաստորեն, Հյուբշմանի դիտարկումը առաջինը չէ:

³⁸ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 68:

³⁹ Sté u Meillet A., Notes arméniennes. 3. Etymologies, "Memoire de la Soci été de linguistique de Paris", no. 8, 1892, p. 164-165. Hübschmann H., նշվ. աշխ., էջ 465: Հմմտ. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 68:

⁴⁰ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 453:

⁴¹ Hübschmann H., նշվ. աշխ., էջ 309: Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 73:

⁴² Տերվիշյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 105:

Ջահուկյանը, ինչպես որ Հյուբշմանը և Աճառյանը, գտնում է, որ հայ. հեզ «վանկ», հեզենայ «գիր. այբուբեն» բառերը փոխառություն են՝ բերելով ասորերենի նույն ձևերը, որ նշում էին նախորդները⁴³:

Այս դեպքում, հավանաբար, կարելի է անել նոր հարցադրում: Հնարավոր է այդ բառերի, մասնավորապես հեզ- արմատի ծագումը կապել հնդեվրոպական որևէ ձևի հետ՝ տարբեր լեզվաընտանիքների միջև հեռավոր ցեղակցային հարաբերության նկատառումով, թե՛ այն պարզապես ուշ սեմական փոխառություն է: Ի դեպ՝ նման հիմք տալիս է հեզ-//հեւ- լծորդելիությունը՝ հիմնված ոչ միայն գ/ւ տարբերակայնության վրա, այլև նկատի ունենալով լծորդելի միավորների ընդհանուր իմաստային կողմը, այն է՝ «հնալը, ծանր շունչ քաշելը՝ հնչեցնելը» և «հնչուն, վանկ» նշանակությամբ:

9. Հայ. հեւ «հնալը», «հնք, հնոց» [այլև հեւ-ամ (*հու-) «(ծանր) շնչել, շունչ քաշել»] արմատը, ըստ Աճառյանի, բնիկ է, ծագում է հնիւ. *peu- «փչել» արմատից, այլև «որ անշուշտ բնաձայն պետք է համարել»: Նա միաժամանակ գտնում է, որ «այս արմատը երևում է նաև ru, ru, phu, bu, bhu ձևերով». հմմտ. լիտվ. pučiù, pūsti «փչել», pūkščiù, pūkšti «հնալ», լատվ. pūtu, pūst «փչել, շնչել», ռուս. пыхать «հնալ», լեհ. puchnąć «ուժեղ շնչել», հիսլ. fýk «ձյան բուք», մբ գերմ. pfuchen «հնալ» և այլն: Վերջինիս առնչակից են դիտվում հայ. փուք, փչել, այլև հոգի ձևերը: Ըստ այսմ՝ հայ. հեւալ < հնիւ. ru, peu, հայ. փուք, փչել < հնիւ. phu-: Աճառյանը նշում է, որ «վերի մեկնությունը (իմա՝ հայ. հեւ < հե. *peu-), տվել է Պետերսոնը, որը և ընդունում է Պոկորնին»⁴⁴:

Ջահուկյանը գտնում է, որ հայ. հեւամ բայարմատը ծագում է հե. *peuā- [*p(e)u, *phu-] արմատից, որն ունի զգալի թվով զուգահեռներ հնդեվրոպական մյուս լեզուներում. հմմտ. հինդ. phupphukāraka- «շնչահեղձ (եղող)», pupphula- «փքված լինելը», phuphusa- «թոք», pupphusa- «թոք, (ջրածաղկի սերմի) պարկուճ», phūt-karóti «փչել, ծանր շնչել, ճիչ արձակել», միդլ. ūan «փրփուր, քափ», կիմր. ewyn, բրետ. eon (հոգն. eien) [<*pou-ino-] «ակունք, աղբյուր», հրբետ. eunoc «փրփրթուն», լատվ. pūlis «խումբ, կույտ», pūlōt «թարախածորել», pūl'i «անձրևաբեր ամպ», ռուս. púlja «զննակ» և այլն: Ընդ որում ընդհանուր հե. *peuā- [*p(e)u, *phu-] արմատից են ծագած դիտվում նաև ոչ միայն հայ. հով (հով-ոյ < *pouo-), հոգ (հոգ-ոյ < *pouo-), հոգի (հոգի-ոյ < *pouio-), այլև հազազ (հազ-

⁴³ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 458, 478, 481, 484, նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 2010, 455:

⁴⁴ Աճառյան Զ., նշվ. աշխ., հ. 3, էջ 90: Հմմտ. Pokorny J. Indogermanisches etymologisches Wörterbuch, 2, Bern/München, 1959, S.847.

ագ? <*pəu-), փուք [փու-ք, փք-ամ (փք-անամ) «ուռչել» < *phu-k], փչեմ (փուչ «փչելը» < *phukje), հոյլ [հոյլ-ի < *peu(s)-l-]⁴⁵: Հետագայում, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողների ունեցած տեսակետից, գտնում է, որ հեւ-ը («բաղադրություններ՝ հեւալ, հեւք») ծագում է «բնիկ հնդեվրոպական *pəu- «փչել» արմատից, որտեղից նաև հով, հոգի, փուքս, փչել»⁴⁶:

Մենք հակված ենք կարծելու, որ եթե 1) ընդունելի է հայ. հովեմ <*Hue/ont^[h]- ծագումը (տե՛ս ստորև), այլև 2) հով- արմատը զուգահեռ է վերը նշված հոգ(ի), հագագ բառերին, ապա հայ. հեւամ (այլև հեւք > հեւոց) բառը նս բխում է նույն արմատից, վերջինիս ձայնավորման լրիվ աստիճանի <*He/ou- ձևից⁴⁷:

10. Հայ. հինինամ//հինանամ «(արագ-արագ) շունչ առնել՝ քաշել. հեծել, հեւալ»: Ընդ սմին «Նոր հայկազյան բառարանը» տալիս է միայն հինինամ ձևը, իսկ «Առձեռն բառարանը»՝ նաև հինանամ⁴⁸: Աճառյանը բերում է հինինամ՝ նշելով նաև «Առձեռն»-ի հինանամ-ը: Նա միաժամանակ գտնում է, որ այս բառի նախալեզվյան ձևը «որոշված չէ դեռ», թեև առաջարկվելիս է եղել *pneu-//*pn- տիպի արմատ, որի բուն իմաստն է դիտվում «շնչել, հեւալ». հմմտ. հուն. πνέω, πνείω, πνεῦσαι «փչել, շնչել, հեւալ», πνεῦμα «շունչ, քամի», πνοή, πνοά «շունչ, թեթև ձայն, արտաշնչելը», հբգերմ. fnehan, մբ գերմ. phnehan «շնչել, ուժգին փչել», phnūsen «հեւալ, փռնգտալ», հիսլ. fnāsa «հեւալ» և այլն՝ նշելով հետևյալը. «Այս բոլորը համարվելով բնաձայն՝ ենթարկվել են կամայական ձևափոխությանց. այսպես նաև հայերենը»⁴⁹:

Ջահուկյանն հինինամ բառի ծագմանն անդրադառնում է ավելի ուշ, նախ՝ գտնելով, որ այն (հարցականով) բխում է հե. *poi-pnēs-? [*pneu-, *pnēs-] արմատից, զուգահեռ ունի միայն փոյուգերենում, և որի համար կա հետևյալ լրացուցիչ մեկնաբանումը. «Հինինամ «հեւալ» բայի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 3, 95-96], որը, սակայն, հայերենի նախաձևը չի ճշտում: Նրա մատնանշած բարբառային հնհնալ, հնիկ-հնիկ անել ձևերը ենթադրել են տալիս *pen- նախաձև, հինինամ-ը՝ *pein- (կրկնությամբ), որպիսիները այլ լեզուներում չեն հանդիպում: Թերևս հայերենի համար բանալի են տալիս մի կողմից՝ հուն. կրկնավոր ποι-πνόν «դեսուդեն եմ ընկնում»,

⁴⁵ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 145, 209, 216:

⁴⁶ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 45:

⁴⁷ Հմմտ. Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 206, 583:

⁴⁸ Աւետիքեան Գ., Միրսիճեան Խ., Աւգերեան Մ., նշվ. աշխ., էջ 99:

⁴⁹ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 95-96:

մյուս կողմից՝ գերմ. *fñēs-, *fñōs-, fñas- ձևերը, որոնց հիման վրա մենք վերականգնել ենք *poi-pñēs- կրկնավոր նախաձևը»⁵⁰:

Իսկ հետագայում Ջահուկյանը բերում է ոչ միայն հինհնամ, այլև հինանամ ձևը, թեականով նշում, որ այն բնիկ է, և ոչ անկախ Աճառյանից՝ բխեցնում է մեկ այլ արմատի տարբերակից (որն, ի դեպ, չի նշվում). «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *pneu- «շնչել, հնալ» արմատի տարբերակային ձևից. հմմտ. հուն. πνείω «փչել, շնչել, ֆսֆսացնել», πνοή «քամի, շունչ», հիսլ. Inysa «փնչալ»⁵¹:

Նման երկակիությունը և թեական բացատրությունը հիմք են տալիս բառի ծագումը այլ արմատից բխեցնելու (հմմտ. հայ. հունչք «ձայն» բառի՝ «Նոր հայկազյան բառարանի» առաջարկած հինչք տարբերակի): Թերևս անհավանական չի կարելի համարել այն, որ հինհնամ/հինանամ բառի հի- արմատը բխում է հե. *H_u- «փչել» արմատից:

11. Հայ. հիւ «շունչ» արմատն առանձին չունի Աճառյանը, և քանի որ այն հնարավոր է կապել հիւանդ բառի հետ, ուստի կարելի է այն քննարկել այդ համատեքստում: Ըստ այսմ՝ հիւանդ կազմությունը դիտվում է իբրև «անստույգ բառ»:

Ջահուկյանը հիւ- արմատը հարցականով բխեցնում է հե. *pep-_u-to- [*pē(i)] ձևից, ընդ որում աղյուսակում պլյուս (+) նշանը դրվում է միայն հին հնդկերենում գուգահեռ ունենալու համար (առանց այդ. գուգահեռ ձևը նշելու)⁵²: Իսկ անդրադառնալով արմատի ծագման վերաբերյալ եղած փորձերին՝ գրում է հետևյալը. «Հիւանդ-ի նախաձևերից *pēp-_u-to-ն վերականգնելու համար հիմք են ծառայել հինդկ. կրկնավոր pāpa- «չար», pāpmān «աղետ, վնաս, ցավ» ձևերը (ըստ Լևիի. հմմտ. Pok., 1, 793), *pēy_uto-ի համար՝ Բրուգմանի *pēy_unto- և Հյուբշմանի ճշտած *peiy_unt- վերականգնումները [ՀԱԲ, 3², 98. հմմտ. հուն. ἄ-πῆμαντος «ոչ հիվանդ»]: Թերևս կարելի է ենթադրել *pēim_u-to- նախաձև, բայց լիովին պարզ չեն *m > ւ անցման պայմանները: Աճառյանը [ՀԱԲ, 4², 634-635] համեմատում է հուն. πόνος «աշխատանք, ջանք, գործ, ցավ, տանջանք» բառերի (փխ. բառի - ձ. Վ.) հետ՝ առանձնացնելով այն *(s)pen- «ձգել, լարել, հյուսել» արմատից, որ, սակայն, անհամոզիչ է»⁵³:

Այնուհետև, ուշագրավ է Ջահուկյանի հետևյալ դիտարկումը. «հ.- է. *p-ի դիմաց սովորական h-ի կոդքին նաև փ (<ph?)՝ հէք (հէգ, հիւանդ)

⁵⁰ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 144, 187, 209:

⁵¹ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 461:

⁵² Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 142:

⁵³ Նույն տեղում, էջ 185:

և փեք «հեգ, խեղճ» [h.-ե. *pē(i)-] «ցավեցնել, վնասել, արհամարհել»], հոգի «շունչ, ոգի» և փուք, փչեմ [h.-ե. *p(h)(e)u- «փչել, սառեցնել»]⁵⁴:

Հետագայում հիւանդ բառի ստուգաբանությունը տրվում է հետևյալ ձևակերպմամբ. «Բնիկ հնդեվրոպական pēphto- [*pē(i)-] «ցավեցնել, վնասել» արմատից. հմմտ հինդկ. papa- «հիվանդ», լատ. paenūria «պակաս», թերևս նաև հեգ»՝ հղելով Աճառյանի և Պոկոռնու բառարանները, այլև իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատությունը⁵⁵:

Եթե ընդունենք հայ. հեւ-//հիւ- արմատական տարբերակայնությունը, որը հավանական է ոչ միայն իմաստային, այլև հնչյունական տեսանկյունից, ապա պետք է ծագած համարել ոչ թե հե. pēphto- [*pē(i)-] «ցավեցնել, վնասել», այլ հե. *Hye(i)- «փչել» արմատից:

12. Հայ. հոգ բառի համար Աճառյանը, նախ, նշում է երկու կարգի իմաստ՝ «ցաւ, մտածութիւն, տրտմութիւն, վիշտ» և «խնամք, փոյթ, հոգատարութիւն», այնուհետև՝ համարում է ծագած հին. *poio արմատից, ընդ որում նշելով հետևյալը. «ցեղակից ձևերը տե՛ս հեւ < հին. *peu- «փչել» արմատի, որ ներկայացնում է նույն բարձր (իմա՝ վերին - Հ. Վ.) աստիճանի ձայնդարձը: Նախնական իմաստը եղել է «ա իս քաշել», որից էլ «ցաւ, վիշտ, տրտմություն», հետո «ուրիշի համար ցավիլ, խնամք, հոգատարություն»: Այսպես է նաև ուրիշ լեզուների մեջ», և ավելացնում, որ «հեւ և հոգ, ինչպես նաև հոգի բառերի ձայնական հարաբերությունը ճիշտ ա՛յնպես է, ինչպես արեւ և արեգ, կով և կոզի»⁵⁶:

Այս բառին, այլև սրան ձևով և իմաստով այս կամ այն չափով առնչակից բառերին բավականին լայն ուշադրություն է դարձրել Գ. Ջահուկյանը: Նա, նախ, որոշակի կապ է տեսնում ոչ միայն հայ. հոգ(ի) «հոգի» և հով «հով, գով», այլև հով և գով (*q-հով) բառերի միջև՝ գտնելով, որ դրանք ընդհանուր առմամբ ծագում են հե. *poio-, այլև *poio- [*p(e)u-, *phu-] արմատից⁵⁷:

Հետագայում, ոչ անկախ Աճառյանից, հայ. հոգ «հոգս, խնամք, հոգածություն», այլև հոգի (ոգի) «հոգի, շունչ, ոգի, եռանդ ուրվական» բառերը ծագած են դիտվում միևնույն արմատից, սակայն նկատելի է այն, որ հոգ-ի դեպքում նշվում է՝ «թերևս բնիկ հնդեվրոպական՝ *poio- [*pəu-, *pau-] «փչել» արմատից, որտեղից նաև հով, հոգի, փուքս, փչել: Աճ. ՀԱԲ 3, 105-107», իսկ հոգի-ի դեպքում՝ «բնիկ հնդեվրոպական՝ *poio- [*pəu-,

⁵⁴ Նույն տեղում, էջ 253:

⁵⁵ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 461:

⁵⁶ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 106-107:

⁵⁷ Джаукян Г. Б., նշվ. աշխ., էջ 89, 226, 240, 276, 305, Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 145, 231, 243, 270 և այլն:

*pau-] «փչել, ուռչել» արմատից, հմմտ. հայ. հեւ, փութս, փչել, հինդկ. p(h)uphusu- «թոք», լատ. pussula «պղպջակ», ռուս. пухнуть «ուռչել»: ԱՃ. ՀԱԲ 3, 107-108»⁵⁸:

Կարելի է մտածել, որ հայ. հոգ- «ցաւ, մտածութիւն, տրտմութիւն, վիշտ» և «խնամք, փոյթ, հոգատարութիւն» արմատը ավելի հավանական է ծագած համարել հե. <*H₂e/ont^[h]- «հով անել, փչել» ձևից, որ ավելի իրական է ոչ միայն հնչյունական առումով, այլև իմաստի տեսակետից (հմմտ. հովեմ «հով եմ անում, փչում եմ»):

13. Հայ. հոգի «հոգի» (բուն իմաստով), «անձ, մարդ, շունչ, սատանա, սիրտ, կյանք, կենդանություն» (փոխաբերական իմաստով) բառի համար «Նոր հայկազյան բառարանը» նշում է «արմատ բառիցս հոգի, շոգի, հագագ, ոգել, հոգալ, լծորդ՝ ոյծ»⁵⁹: Ըստ Պետերմանի՝ լծորդ են հոգի և շոգի բառերը (հմմտ. հագանել/զգենուլ, հով/զով)⁶⁰: Տերվիշյանը գտնում է, որ առնչակից են սփոփել և փոփոգել, իսկ հոգի-ն փոփոգել-ի ոչ կրկնավոր ձևն է՝ իբրև փոգի, որից հոգի և այլն⁶¹:

Ըստ Աճառյանի՝ «բնիկ հայ բառ՝ հնիւ. քառ- ձևից, որ ծագում է քս- «փչել, շնչել» արմատից. ցեղակիցները տե՛ս հեւ և հոգի ձևերի տակ: Հոգի նշանակում է բուն «փչիւն, շունչ»: Նախնական մարդու համար «հոգի, քամի, շունչ, օդ, փչիւն» միևնույն գաղափարներն էին» (բերվում են բնագրային օրինակներ՝ Ս. Գիրք, Եզնիկ և այլն)⁶²:

Այս դեպքում նույնպես հակված ենք կարծելու, որ բառը ծագում է հե. *H₂e/ont^[h]- արմատից:

14. Հայ. հովեմ «հովահարել, զովացնել» բառը կա «Նոր հայկազյան բառարանում»՝ եզակի վկայությամբ. «հրեշտակ տեսած կայր մերձ, և հովեր զերեսս նորա»⁶³: Բայական այս ձևը Աճառյանը բերում է հով «հովահարել» արմատի տակ, Ջահուկյանը չի անդրադառնում այդ բառին: Բառի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին, որ տրվում է հետևյալ կերպ. «Բնիկ հայ բառ՝ հնիւ. *քս- «փչել, փչիւն» արմատից, որի վրայ տե՛ս հեւ, հոգ և հոգի»: Այնուհետև իբրև «նախնական «փչյուն» գաղափարից «ցուրտ, հով» գաղափարին անցնելու օրինակ», ոչ անկախ Պոկոռնուց, բերվում են համեմատելի զուգահեռներ՝ ավեստ. ao-ta-, հինդկ. ūdhar, ōman-, լատվ. aūksts, իռլ. ūar և այլն, «որոնք բոլորը նշանակում են «ցուրտ, ցրտություն», բայց ծագում են հնիւ. *ալ- «փչել» արմատից: Կարելի է սակայն

⁵⁸ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 464:

⁵⁹ Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ., նշվ. աշխ., էջ 113, 503:

⁶⁰ Petermann H., նշվ. աշխ., էջ 62:

⁶¹ Տերվիշեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 46, 93:

⁶² Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 107-108:

⁶³ Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկագեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 123: Կա մեկ այլ վկայություն, որում գործածված հովեալ ձևը բնագրային ուղղման է առնվում. «թուի գրելի է հոծեալ»:

Բարաքնական և ստուգաբանական ճշգրտումներ ու լրացումներ... 293
ընդունիլ, թե հով հին հայերենի մէջ էլ ունէր «քամի» իմաստը, որ պահում են մինչև այժմ զանազան զաւատականներ»⁶⁴:

Գամկրելիձէն և Իվանովն ունեն հովեմ «փչել, հով անել, զովացնել» բայը, որը բխեցվում է հե. *H_uc/ont^[h] - արմատից. հմմտ. խեթ. hu_uant- «քամի» (սեռ. հոլ. hu_uandaš, հոգն. ուղղ. հոլ. hu-_ua-an-te-cš), լատ. uentus «քամի», գոթ. winds, հինդկ. vāti «փչում է»: Գտնում են, որ հուն. ἄνεμος «փչում է», ἄελλα «քամի», «փոթորիկ» ձևերի պրոթետիկ ձայնավորի առկայությունը թույլ է տալիս ենթադրելու այդ դիրքում վանկարար «կոկորդային» այլահնչակ (ալլոֆոն) *H-ի հնարավորություն, իսկ ոչ վանկարար «կոկորդայինի» նույնպիսի դիրքը (*H_ues-) արտացոլված է խեթ. hu_ucš- «ապրել, գոյություն ունենալ» (եզ. 3-րդ դեմք hu-c-cš-zi «ապրում է, գոյություն ունի», hu_ucšnu- «վերակենդանացնել», «թողնել.ապրեցնել» ձևերում. հմմտ. հինդկ. vāsati, գոթ. wisan «լինել, գոյություն ունենալ», հուն. ἰσώ, ներկա ժամ., աոր. ἄ(F)ησα «գիշերն անցկացնել. գիշերել», «քնել» (հմմտ. հայ. գիշ-երել «գիշերն անցկացնել»?)⁶⁵:

Այնուհետև, նկատենք, որ հեղինակները գտնում են, որ «H «կոկորդային» հնչույթը նախորդող դիրքում՝ և ձայնորդից առաջ հանդես է եկել, ըստ երևույթին, իր ոչ վանկարար տարբերակի ձևով՝ արտացոլված խեթերենում և-ի տեսքով, սակայն անհետացած մյուս բարբառներում»⁶⁶: Ըստ այսմ, հայ. հովեմ-ի հ-ն կա՛մ չի համարվում «կոկորդային» հնչույթի արտացոլում (ինչպես խեթ. hu_uant- «քամի», սեռ. հոլ. hu_uandaš, հոգն. ուղղ. հոլ. hu-_ua-an-te-cš), կա՛մ էլ հետագա՝ հայերենի ինքնուրույն զարգացման ընթացքում ձեռքբերում է, որ առանձին քննության խնդիր է:

15. Հայ. հունչ(ք) «ձայն» բառի մեկնությունը, «Նոր հայկազյան բառարանի» առաջարկած հինչ(ք) տարբերակի բնագրային ոչ այնքան հիմնավոր ճշգրտմամբ հանդերձ⁶⁷, տվել է Աճառյանը, որն ստացել է հետևյալ ձևակերպումը. «Բնաձայն բառ. կազմված է հ ձայնից, արմատի համար հմմտ. հաչել, հոչակ, հոնչիւն, հառաչել, հոնդիւն, իսկ ձևի համար հմմտ. շնչել, բնչել, գնչել, կնչել, պնչել, փնչել, մնչել, խնչել. բոլորն էլ աճած ն, չ մասնիկներով»⁶⁸:

Ջահուկյանը, նախ՝ գտնում է, որ հայ. հազագ (կրկն. *հազ-հազ) բառը ծագում է հե. *a_u- «փչել, քամհարել, շնչել» արմատից (նրշվում են զուգահեռ ձևեր ցեղակից լեզուներից, ընդ սմին հկիմր. awyδ «քամու ուժեղ պոթկում»), հմմտ. հայ. հով «քամի. հով, զով», հոգի

⁶⁴ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 116:

⁶⁵ Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 206:

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Աւետիքեան Գ., Միրսիճեան Խ., Աւգերեան Մ., նշվ. աշխ., էջ 124:

⁶⁸ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 96, 123-124:

«շունչ» (հնարավոր է նաև շոգի «գոլորշի»։ հունչ «ձայն» և շունչ «շնչելը»), «որ սովորաբար բխեցնում են *rou-, *rouiio»⁶⁹։ Հետագայում հունչ-ը (հարցականով) ծագած է համարվում հե. *son- (*sun?) [*s(u)en-] արմատից, իսկ ավելի ուշ՝ վերադառնալով Աճառյանի տեսակետին, այն դիտվում է «բնաձայն կազմություն»⁷⁰։

Այս արմատը, հավանաբար, համեմատելի է վալլ. gwynt «քամի» (< հե. *Hu- «փչել»)։ հինդկ. vāti «փչել», ավեստ. vāiti, հուն. ὄψις, գոթ. waian «փչել», հվգերմ. wāen, գերմ. wehen, հւլավ. vējati և այլն ձևերի հետ։

Ընդ որում այս արմատից է դիտվում՝ հե. *Hue(ł)- «թռչուն» [կոնկրետ՝ «արծիվ»։ հմմտ. իերթ. ħaraš^{MUSEN} «արծիվ»⁷¹, ռուս. орел «արծիվ», լիտ. erēlis «արծիվ», գոթ. ara «արծիվ», հմմտ. հայ. (h)աւ-ք «թռչուն», այլն հե. *Huent[h]- «քամի. փոթորիկ»։ հմմտ. իերթ. ħuqant «քամի», թոխ. U want, wānt «քամի», Բ yente «քամի», լատ. uentus «քամի», վալլ. gwynt «քամի», գոթ. winds «քամի», հրգերմ. wint (գերմ. Wind), հանգլ. wind⁷²։

16. Հայ. շոգ «տաքություն, տոթ» (որից՝ շոգի), ըստ Աճառյանի՝ «անստոյգ բառ», որը միաժամանակ նշում է հետևյալը. «Շոգ և շոգի բառերի նշանակությանց զարգացման համար հմմտ. գոլ և գոլորշի», այլն չի ընդունում ո՛չ Հ. Պեդերսենի՝ դիտարկումը շնչել և հոգի բառերի հնարավոր կապի մասին, ո՛չ էլ Է. Լիդենի նկատառումը հոգի բառից շոգի դուրս բերելու վերաբերյալ (հմմտ. հունչ> շունչ)⁷³։

Ջահուկյանը նախկինում գտնում էր, որ հայ. շոգ «շոգ» բառը ծագում է հե. *k'eu-k- «լույս տալ, վառվել» (*k'eu- «լույս տալ. լուսավոր», եթե ոչ՝ հե. *k'uo-gh- արմատից)։ հմմտ. հինդկ. śōcati, śūcyati «լույս է տալիս, փայլում է, վառվում է, կիզում է», śocáyati «քորնկում է, վշտացնում է», śūci- «լուսավոր, փայլուն, մաքուր», ավեստ. saocint «այրող, տաք», ātra-saoka «խանձող», նալսկ. soxtan «այրել, վառել», šōg «սուղ, վիշտ» (<հայ. սուղ «սուղ, վիշտ») և այլն⁷⁴։

⁶⁹ Джаукян Г. Б. Очерки по истории дописьменного периода армянского языка, с. 240.

⁷⁰ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 152, 218, նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 468։

⁷¹ Հմմտ. հայ. խորդ // խորթ «կրունկ»։ Ջահուկյանը նշում է՝ «թերևս բնաձայն բառ՝ կապված խորդալ բնաձայն բայի հետ (Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 344)։

⁷² Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 489, 537, 677։

⁷³ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 528։ Հմմտ. Джаукян Г. Б., նշվ. աշխ., էջ 240։

⁷⁴ Джаукян Г. Б., նշվ. աշխ., էջ 195։

Իսկ հետագայում բառի ծագմանն անդրադառնում է որոշակի վերապահությամբ. «թերևս բնիկ հնդեվրոպական՝ *kʰēogh [*kʰeu-] «լուսավորել, լուսավոր» արմատից, որից նաև շուք, շող, նշոյլ»⁷⁵:

Նկատենք, որ այստեղ լծորդվում են նաև հայ. շուք, շող, նշոյլ բառերը, իսկ նախկինում՝ միայն սուգ բառը, որն առաձին հարց է բառային միավորների ամբողջ խմբի ընդհանուր իմաստային և ծագումնային քննության համար:

17. Հայ. շունչ «շնչառություն, ոգի, հոգի» բառը, ըստ Ջահուկյանի նախկին ստուգաբանության, ծագում է <հե. *kʰuonkio- (<*kʰu-/*kʰeu-, որից էլ՝ *kʰues-/*kʰus- «հնալ, մշմշալ, ախ քաշել») նախաձևից. հմմտ. լիտվ. šv-añkšti «շնչել, մշմշալ, հնալ», ընդ որում տողատակին արվում է հետևյալ դիտարկումը. «Թերևս հնարավոր է նաև *k₁ > g անցում (հմմտ. քանցեմ «տանջել, լլկել, տվայտել» <*kn₁kiō <*kenk «այրել, ցավ պատճառել», որից՝ լիտվ. kankà «ցավ, տանջանք», kankinti «տանջել, լլկել, ցավ պատճառել», keñkti «վնասել, վնաս տալ» և այլն)»⁷⁶:

Նույնը գտնում ենք հետագայում, սակայն մեկ էական լրացումով, այն է՝ հե. *kʰues-/*kʰus- «հնալ, մշմշալ, ախ քաշել» ընդհանուր արմատի *keu-lo- (հարցականով) տարբերակից է բխեցվում հայ. սոյլ (սուլեմ «սուլել, շվշվացնել») ձևը, որը զուգահեռներ ունի ցեղակից լեզուներից մեկ-երկուսում⁷⁷:

Իսկ ավելի ուշ բառի ստուգաբանությունը տրվում է թեականով, ոչ հնդեվրոպական հիմքի վրա՝ նշելով. «թերևս բնաձայնական կազմություն», հղելով Աճառյանին և ավելացնելով, որ Պոկորոնին «բխեցնում է *kʰuonkiō- նախաձևից»⁷⁸:

Այս դեպքում, եթե հ//շ լծորդությամբ տարբերակներ ենք դիտում, հայ. հոգի//շոգի, հունչ//շունչ բառերը, որ իմաստով (բովանդակության պլանում) միանգամայն արժանահավատ է, ապա շունչ բառը պետք է ծագած համարել հնդեվրոպական այն նույն արմատից, որից ունենք հունչ բառը (տե՛ս վերը):

18. Հայ. ոգել «խոսել, երգել, նուագել» բառը ըստ Եր. Մեղրեցու բառարանի՝ ունի «ասել» իմաստը, որից՝ ոգելական «բարբառական»⁷⁹:

⁷⁵ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 591:

⁷⁶ Джаукян Г. Б., նշվ. աշխ., էջ 172:

⁷⁷ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 133: Հմմտ. Pokorny J., նշվ. աշխ., էջ 632:

⁷⁸ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 594: Հմմտ. Pokorny J., նշվ. աշխ., էջ 631-632:

⁷⁹ «Բառգիրք հայոց», քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Ե., 1975, էջ 253:

Աճառյանը համարում է «անստոյգ բառ», թեև բերում է նախորդ ուսումնասիրողների ոչ պակաս ուշադրության արժանի մեկնության փորձերը, որոնցից ավելի հավանական կարելի է համարել այն, որ «Նոր հայկազյան բառարանը» այն բխեցնում է հայ. հազազ կամ ոգի բառից⁸⁰:

Իսկ ըստ Տերվիշյանի՝ կապ ունի մի կողմից՝ վանկ/վանգ, գոչել (գոգցես, գոգջիր), մյուս կողմից՝ հեզել, հազազ (*հազ-հազ), այլև ոգել, ոգեղ (հմմտ. ոգեղաբարբառ) բառերի հետ (եթե բացառվի վերջիններիս՝ սեմականի հետ առնչությունն ունենալը)՝ այն ծագած համարելով հնիս. *vak- «գոչել, խոսել» արմատից. հմմտ. սանս. vač, լատ. vocāre «կանչել, ձայնել», vox «կոչ, ձայն», հուն. εἶπον (<*ἔπο) «ասել, խոսել», ὄψ, ὀπός «ձայն, խոսք», պրսկ. āvāz, bānik (տե՛ս նաև վերը)⁸¹:

Իսկ Ջահուկյանը, ոչ անկախ Պոկոռնուց, գտնում է, որ հայ. ոգել «ասել, խոսել, երգել, նվագել» բառը ծագում է հե. *uog^h- (*ueg^h) «հանդիսավոր կերպով խոսել» արմատից. հմմտ. հինդկ. vāghát «աղոթավոր, ուխտավոր», լատ. voveō (< vovēre) «ուխտել», uōtum «ուխտ, երդում», գո՛գ «ասա՛, ասել»⁸²:

Գամկրելիձեն և Իվանովը գտնում են, որ հե. *Hueg^{[h]o}- արմատից է ծագում ոչ միայն հայ. գո՛գ «ասա՛, խոսի՛ր» (հմմտ. խեթ. hūek- «աղոթել, կախարդել», «աղոթք անել՝ ասել», այլև հինդկ. vāghát «աղոթք արած», լատ. uoueō «խոսք եմ տալիս, խոստանում եմ», uōtum «ուխտ, խոստում», ումբր. bufetes «պահանջ, ցանկություն») բայաձևը, այլև նույն արմատի մյուս՝ ածանցի զրո ձայնավորմամբ *Hu-g^{[h]o}- տարբերակից՝ յուզեմ «փնտրել, խնդրել» (հմմտ. խեթ. hūk- «նույնը», այլև մյուս լեզուների տվյալները) բայր⁸³:

Այնուհետև, եթե նկատի ունենանք, մի կողմից՝ ոգել «խոսել, երգել, նուագել» բառի հետ սանս. vač, այլև ավեստ. vačya «հարված, զարկ» հնարավոր առնչությունը, այլև եթե հաշվի առնենք հայ. վեզ «վեզ, կոճ,

⁸⁰ Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ., նշվ. աշխ., էջ 502:

⁸¹ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 549, Տերվիշյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 105: Անհավանական չէ համեմատության մեջ դնել նաև հայ. յոյգ «վեզ, խաղալու կոճ» բառը, մանավանդ որ իրանական փոխառություն են ոչ միայն վեճ «վեճ, խոսքակոթիվ (հմմտ. բանավեճ)» և վեզ «վեճ, կոթիվ» բառերը (հմմտ. ավեստ. vačya «հարված, զարկ», այլև վեզ «վեզ, կոճ, ճան» (եթե ոչ նաև վեժ «վիժում, թափվելը, արտահոսք») բառերը (հմմտ. Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 710):

⁸² Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 599: Հմմտ. Pokorny J., նշվ. աշխ., էջ 348: Անհավանական չէ այս նույն արմատից ծագած համարել նաև ոգոչել «գոռալ, դոփել», ոգոզել (նաև ոյոզել) «վրեժ ունենալ, նախանձել» բառերը, այլև դրանք միացնել ոգորիլ «կռվել, մարտնչել, դիմակայել» բային, որն իր հերթին դիտվում է «անհայտ ծագման»:

⁸³ Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 236, 803:

Բառարձանական և ստուգաբանական ճշգրտումներ ու լրացումներ... 297
*ճան» բառի խաղաքար («մի տեսակ խաղի միջոց») լինելու գործառական կողմը՝ լեզուն կրողների ավանդական պատկերացումներում, մյուս կողմից՝ յոյզ «վեգ, խաղալու կոճ», յոյզ (յուզեմ «փնտրում եմ», «որոնում եմ») // ուզեմ (*ոյզ) «ուզում եմ»⁸⁴ բառերը, ապա այս խմբի միավորների իմաստային (բովանդակության պլանի) ընդհանրությունը միանգամայն պարզ է և հավաստի⁸⁵:*

ЛЕКСИКОЛОГИЧЕСКИЕ И ЭТИМОЛОГИЧЕСКИЕ УТОЧНЕНИЯ
 И ДОПОЛНЕНИЯ В ОТДЕЛЬНУЮ ТЕМАТИЧЕСКУЮ ГРУППУ СЛОВ
 ИНДОЕВРОПЕЙСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ

АМБАРЦУМЯН В. Г.

Резюме

В армянском языке есть определенные семантические (тематические) группы слов, которые берут начало с древнейших времен, являясь вариантами того или иного корня. В дальнейшем в силу определенных фонологических и семасиологических изменений они значительно отошли друг от друга, стали применяться как отдельные лексические единицы, особенно в письменный период развития языка. Семасиологический и этимологический анализ лексических единиц такого порядка имеет определенное значение с точки зрения общей истории лексического состава армянского языка, в особенности при учете данных новейших исследований в области сравнительно-типологической лингвистики и в так называемом вариативно-типологическом исследовании индоевропейских языков.

Нижеприводимыми примерами дается анализ отдельной группы слов, выражающих общеиндоевропейское значение “дышать” произносить, говорить; верить, заботиться и т.д.”: *աւաւ* (также *հաւաւ*) [awat (hawat)] “преданность верованию, религии; доверие, точность” <и.-е. *H₂u-(i)- [*H₂ue-(i)-], *աւետ* (также *աւէտ*) [awet (awēt)] “(радостная) весть” <и.-е. *H₂u-(ed)-, *զոյզ* (также *զոյզ-եւ*) [gog (gočem)] “скажи” <и.-е. *H₂eu-(g^[h]o)-, *զոհ* [goh] <и.-е. *H₂u-(g^[h]o)- “доволен”, *հազազ* [haɣaɣ] “произношение” <и.-е. *H₂eu-(g^[h]o)-, *հաւ* [haw] “птица” <и.-е. *H₂u-(i)- [*H₂ue-(i)-], *հաւան* [hawan] “одобрение, уговаривание” <и.-е. *H₂u(i)-, *հեզ* [heɣ] “слог”,

⁸⁴ Հստ «Նոր հայկազյան բառարանի»՝ «ուզել. բառ ռամկական՝ առեալ ի գրաւորէս յուզել, իբր խնդրել, այսինքն՝ կամիլ, պահանջել, և որոնել» (Աւետի-քեան Գ., Միւրմէլեան Խ., Ազգերեան Մ., նշվ. աշխ., էջ 539):

⁸⁵ Ջահուկյանը գտնում է, որ իրանական փոխառություն են ոչ միայն վեճ «վեճ, խոսքակոչիվ (հմմտ. բանավեճ)» և վեգ «վեճ, կոչիվ» բառերը (հմմտ. ավեստ. vačya «հարված, զարկ»), այլև վեգ «վեգ, կոճ, ճան» (եթե ոչ նաև վեժ «վիժում, թափվելը, արտահոսք») բառը, որի (որոնց) «բուն աղբյուրը (իրանական) չի հաստատված», այլև յոյզ «վեգ», որ թեականով դիտվում է «վեգ բառի տարբերակային մի ձև» (հմմտ. Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 554, 710):

“произношение (буквы)” // *hēl* [hew] “вздых” “(тяжелое) дыхание” <и.-е. *He/oṽ-, *hḥūhūw*//*hḥūwūw* [hinanam/hininam] “(продолжительно) дышать” <и.-е. *Hḥ- “дуть”, *hḥl* [hiw] “дыхание” *Hḥe(i)- “дуть”, *hnq* [hog] “боль, озабоченность, тоска”, “уход, забота” <и.-е. <*Hḥe/ont^[h]- “дуть”, *hnqh* [hogi] “душа” (в собственном смысле), “лицо, человек, душа, дьявол, сердце, жизнь, живое” (в переносном значении) <и.-е. *Hḥe/ont^[h]-, *hnqḥ* [howem] “обдывать, освежать <и.-е. *Hḥe/ont^[h]-, *hnūz(p)* [hunč(k')] “голос; звук” <и.-е. *Hḥ-(e)-, *znq* [šog] “тепло, жара” <и.-е. *Hle/ont[h]- (ср. *hnūz* [hunč'] > *znūz* [šunč'), *znūz* [šunč'] “дыхание, дух, душа” <и.-е. *Hḥ-(e)-, *nqtl* [ogel] “говорить, петь, играть (на муз. инструменте)” *Hḥeg^{[h]o}-.

SEMASIOLOGICAL AND ETYMOLOGICAL CLARIFICATIONS AND ADDITIONS
OF ARMENIAN UNITS MAKING THE SEMANTIC GROUP OF INDO- EUROPEAN ORIGIN

V. HAMBARTSUMYAN

Abstract

Semasiological and etymological analysis of lexical units has an estimated value from the viewpoint of the general history of the lexical structure of the Armenian language, especially when considering the recent research in the field of comparative-typological linguistics and the so-called variative-typological analysis of the Indo-European languages.

The below-mentioned samples illustrate the analysis of one group of words denoting ‘to breathe, to pronounce, to speak, to believe, to take care, etc in the common Indo-European language’: *wiww* (also *hwiww*) [awat (hawat)] (faith, belief; religious beliefs’ <IE *Haw(i)- [*Hḥe(i)-], *witun* (also *witun*) [awet (awēt)] ‘(good) tidings’ <IE *Haw-(ed)-, *qnq* (also *qnq-tu*) [gog (gočem)] ‘say, tell; exclaim, cry’ <IE *Hḥe-yo-(g^{[h]o})-, *qnḥ* [goh] <IE *Hḥe-(g^{[h]o})- ‘content (with), satisfied (with)’, *huquwq* [hagag] ‘pronunciation, articulation’ <IE *Heṽ-(g^{[h]o})-, *hwi* [haw] ‘bird’ <IE *Haw(i)- [*Hḥe(i)-], *hwiwū* [hawan] ‘probable, likely; consent, assent’ <IE *Haw(i)-, *hḥq*//*hḥl* [heg/hew] ‘syllable; articulation, pronunciation’ <IE *He/oṽ-, *hḥūhūw*//*hḥūwūw* [hinanam/hininam] ‘(be short of breath; puff and pant’ <IE *Hḥ-, *hḥl* [hiw] ‘breathing; respiration’ <*Hḥe(i)-, *hnq* [hog] ‘care, anxiety; thoughtfulness’ <IE <*Hḥe/ont^[h]-, *hnqh* [hogi] ‘soul, spirit; face, person, man; monster, fright’ <IE *Hḥe/ont^[h]-, *hnqḥ* [hovem] ‘freshen up; cool, fresh’ <IE *Hḥe/ont^[h]-, *hnūz(p)* [hunč(k')] ‘sound, voice’ <IE *Hḥ-(e)-, *znq* [šog] ‘hot, burning; heat’ <IE *Hḥe/ont^[h]- (ср. *hnūz* [hunč'] ‘sound, ring’, *znūz* [šunč'] ‘breathing, respiration’ <IE *Hḥ-(eÁ)-, *nqtl* [ogel] ‘speak; sing; play (the musical instrument)’ < *Hḥeg^{[h]o}-.